ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
18 ապրիլի 2025 թվական, N 47-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ 0.307 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14-րդ կետի ա) ենթակետով, 38-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի սեփականության իրավունքի N 1244167 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, Օձուն գյուղի վարչական սահմանում գտնվող, թիվ 1 մանկապարտեզի շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած՝ 0.307 հեկտար մակերեսով, կադաստրային 06-112-0036-0009 ծածկագրով հողամասը (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1244167) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Լոռու մարզի «Ալավերդի համայնքի ՀԱՐԵՎՆԵՐ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ
ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ
ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ
ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ
ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ
ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ
ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ
ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ
ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., ապրիլի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի